ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2020 թվականի N 99-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, 17-րդ հոդվածի դրույթներով ***որոշում եմ՝***

Գումարել Ալավերդի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ 2020 թվականի ապրիլի 30-ին, ժամը 15.00-ին, համայնքապետարանի վարչական շենքում՝ հետևյալ օրակարգով.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 30-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

2. Համայնքի ղեկավարի հաղորդումն Ալավերդի համայնքի 2020 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

3. Ալավերդի համայնքի 2020 թվականի բյուջեի մեջ փոխություններ կատարելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

4. «Քաղաքացու բյուջե» ենթադրամաշնորհի մրցույթի հայտադիմումների գնահատման արդյունքները հաստատելու և համայնքային ներդրման չափ սահմանելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

5. Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ Աքորի գյուղի տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

6. Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ «Ալավերդու քաղաքային համայնքի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի 1-ին մասնաշենքի 1-ին հարկից 150.4 քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

7. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի տարածքում գտնվող 0.0229 հա մակերեսով հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

8. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի տարածքում գտնվող 0.67659 հա մակերեսով հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

9. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ Կաճաճկուտ գյուղի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության այգու նկատմամբ վարձակալության իրավունքի մրցույթ կայացնելու թույլտվություն տալու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

10. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ Աքորի գյուղի տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքի մրցույթ կայացնելու թույլտվություն տալու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

11. Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի Ալավերդի համայնքի Աքորի գյուղի վարչական տարածքում գտնվող սիլոսի հորը Ալավերդի համայնքի հաշվեկշռում ընդգրկելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

12. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

13. Ալավերդի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 25-ի N 8-Ա և 2017 թվականի դեկտեմբերի 27-ի N 14-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. ապրիլի 27
ք. Ալավերդի